–Հապ օ՛ն յառաջ, կգոչէ Ամբակում աղան եւ այնպիսի արագութեամբ մը կ'անցնի բժշկին քովէն, որ Ասկղեպիոսին աշակերտը գետին կ'իյնայ։

Բժիշկը վար կ'երթայ եւ Ամբակում աղային տիկնոջ կ'ըսէ.

–Ամուսնոյդ ուղեղը վնասուած է։

–Խելագարա՞ծ է։

–Գրեթէ։

–Ի՞նչ կ'ըսէք. հիմա խելքս կթռցունեմ… ասոր մէկ ճա՞րը։

–Ճա՞րը… կապելու եւ Փրկիչ տանելու է։

–Ըլլալու բան չէ… գոնէ ազգային երեսփոխանական ժողովը տանինք…։

–Երեսփոխանական ժողովը յիմարանո՞ց է։

–Ի՞նչ գիտնամ, երեկ քրոջս տղան կ'ըսէր, որ ազգային երեսփոխանական ժողովոյ մէջ խենդ ու խելառ խօսքեր կ'ընեն։ Բայց, տէր բժիշկ, իմ ամուսինս խելագարելու պատճառ մը չունէր։

–Բանի մը վրայ շատ մտածե՞ց։

–Բնաւ երբէք։

–Մեծ վիշտ մը կրե՞ց։

–Ոչ։

–Խմբագրութիւն կ'ընէ՞։

–Ամենեւին։

–Ֆրանսերէնէ - հայերէն ընդարձակ բառարան մը կը հրատարակէ՞։

–Ոչ, ոչ, ադանկ բաներ չըներ։

–Չափազանց ուրախութիւն մը զգա՞ց մօտերս։

–Գրեթէ քանի մը ատենէ ի վեր միշտ ուրախ էր, ամեն օր կ'ըսէր. «Հայաստանի կուսակալ պիտի ըլլամ»։

–Խե՛ղճ մարդ։

–Խղճալի՛ ամուսինս։

Բժիշկը դեղագիր մը կգրէ, այցելութեան վարձը կ'ընդունի եւ կը մեկնի։

Ամբակում աղան վար կու գայ եւ կհրամայէ, որ սեղան պատ-րաստուի։